Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունվարի 15-ի N 49-Ն որոշման

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ (ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐՄՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՂՈՐԴՎՈՂ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՊՔԵՐԻ ՌԵԳԻՍՏՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների հարցերով ազգային համակարգող մարմնում (այսուհետ՝ ազգային համակարգող մարմին) միջազգային կազմակերպություններին, միջկառավարական մարմիններին, առանձին երկրներին, ինչպես նաև միջոլորտային համագործակցության շրջանակներում հաղորդվող՝ հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող դեպքերի (այսուհետ՝ դեպքեր) ռեգիստրը (այսուհետ՝ ռեգիստր) և դրանք հաղորդելու կարգը:

2. Դեպքերը Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը հաղորդվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2025 թվականի մայիսի 27-ի N 3219-Ա հրամանով սահմանված կարգով:

3. Միջազգային կազմակերպություններին, միջկառավարական մարմիններին, առանձին երկրներին դեպքերը հաղորդվում են միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և կարգով:

4. Միջոլորտային համագործակցության շրջանակներում դեպքերը հաղորդվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշմամբ սահմանված կարգով:

5. Ռեգիստրը ձևավորվում է սույն հավելվածի 2-4-րդ կետերով սահմանված կարգով հաղորդված տեղեկատվության հիման վրա:

6. Ազգային համակարգող մարմինը՝

1) կազմակերպում է տեղեկատվության ընդունումը.

2) ապահովում է ռեգիստրի վարման շրջանակներում միջազգային կազմակերպություններին, այդ թվում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը, միջկառավարական մարմիններին, առանձին երկրներին, ինչպես նաև միջոլորտային համագործակցության շրջանակներում տեղեկատվության հաղորդումը:

2. ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՈՒՄԸ

7. Ռեգիստրը վարում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմինը՝ որպես ազգային համակարգող մարմին, այդ թվում՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման կամ հանրային առողջապահության բնագավառում գործունեություն իրականացնող իր ենթակայության պետական կազմակերպությունների միջոցով:

8. Ռեգիստրը բաղկացած է 2 բաժնից՝

1) միջազգային կազմակերպություններին, այդ թվում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը, միջկառավարական մարմիններին և առանձին երկրներին հաղորդվող դեպքերի վերաբերյալ ռեգիստր, որը վարվում է սույն հավելվածի Ձև 1-ին համապատասխան.

2) միջոլորտային համագործակցության շրջանակներում հաղորդվող դեպքերի վերաբերյալ ռեգիստր, որը վարվում է սույն հավելվածի Ձև 2-ին համապատասխան:

9. Տեղեկատվությունը ռեգիստրում գրանցվում է այն ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

10. Ռեգիստրում լրացվում են արձանագրված դեպքի վերաբերյալ բոլոր մանրամասները:

11. Ռեգիստրում առկա տեղեկատվությունը կարող է փոփոխվել միայն, եթե առկա են փոփոխման համար հաղորդող շահագրգիռ մարմնի կողմից ներկայացված հիմնավոր փաստաթղթեր (հետազոտությունների արդյունքներ): Փոփոխության վերաբերյալ ռեգիստրում կատարվում են համապատասխան նշումներ:

ՌԵԳԻՍՏՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ ՀԱՂՈՐԴՎՈՂ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՊՔԵՐԻ

Հերթական համար	Տեղեկատվություն վարակիչ հիվանդությունների, անսովոր և անսպասելի դեպքերի և միջազգային նշանակության արտակարգ իրավիճակի մասին			Արձանագրված դեպքի վերաբերյալ մանրամասներ														
	Դեպքի տեսակը՝ կենսաբանական, քիմիական, ճառագայթային	Դեպքի արձանագրման վայրը	Դեպքի արձանագրման վայր հանդիսացող կազմակերպության դեկավար	Դեպքի վերաբերյալ համառոտ գրառում ամսաթիվ	Դեպքի հայտնաբերման ամսաթիվ	Դեպքի ընդհանրացված ամսաթիվ	Դեպքը հանրային առողջապահության համար նշանակալի հեռանկարներ ունենալու դեպքում ունի՞ (եթե այո՝ առանձին ներկայացնել մանրամասներ Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշման)	Անհրաժե՞շտ է արդյոք օգնություն դեպքը բացահայտելու, ուսումնասիրելու, դրան արձագանքելու, դրա նկատմամբ հսկողություն իրականացնելու և նոր դեպքերի առաջացումը կանխելու համար (եթե այո՝ առանձին ներկայացնել մանրամասներ հանձնաժողովի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշման)	Դեպքն անասնո՞ւ է	Դեպքը հանրային առողջապահության տեսակետից	Առկա՞ է սեռական ալիքով փոխանցվող այլ պեստություններին նման դեպքերի հետ կապի մասին	Առկա՞ է տեղեկատվություն՝ կենսաբանական ազդակի կրողի կամ պացիենտի հնարավոր անդրադարձային տեղաշարժի մասին (եթե այո՝ առանձին ներկայացնել մանրամասներ հանձնաժողովի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշման)	Դեպքն առաջացե՞լ է շրջակա միջավայրի աղտոտումներից, որը միջազգային սահմանների հարևանությամբ ունի (համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի N 1138-Ն որոշման)	Դեպքը միջազգային երթևեկության այնպիսի տարածքո՞ւմ է, որը շրջակա միջավայրում հնարավոր տարածման ներուժ ունի կամ տարածարկման (դեկոնտամինացիայի) համար կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման սահմանափակ հնարավորություններ ունի	Անցյալում նման դեպքի հետևանքով առաջացե՞լ է միջազգային առևտրի կամ երթևեկության սահմանափակում	Հայտնի՞, թե վարակի ծագման աղբյուրը, փոխանցման ուղիները	Մի՞ թե տարածված դեպք է դիտարկվում կամ արտահանման հետ	Դեպքն առաջացել՞, է կամ հասել միջազգային միջազգասահմանների հետ կամ անհայտ ամսաթիվ	Անցյալում դեպքի հետևանքով առաջացե՞լ է միջազգային առևտրի կամ երթևեկության սահմանափակում	Դեպքի սաղմն ունի՞ միջազգային նշանակության մի քանի դեպք՝ ելնելով հիվանդության կամ դեպքերի միջազգային նշանակության չափանիշներից և հակահամաճարակային միջոցառումներ ու ռեսուրսներ պահանջելուց

Ձև 2

ՌԵԳԻՍՏՐ

ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՂՈՐԴՎՈՂ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՊՔԵՐԻ

Թիվ	Տարեթիվ, ամիս, օր	Տեղեկատվության բովանդակություն	Ո՞վ է հաղորդել	Ու՞մ է հաղորդվել	Նշումներ
1	2	3	4	5	6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ